

Խնդիր մեր, զորմէ բռնուհ հարեալ է իմ լա

«Հարկաւոր է որ քաղաքակրթեալ աշխարհն գիտնալով զայս ամեն սոսկալի եղելութիւնքն սրտմտի և վատահամբաւէ զայնոսիկ»:

Կայսերական հրամանագրով, Գանուբի դո-րաբանակին նախորդ քնդհանուր մեծ զօրապետ Ապտիւլ-Քէրիմ փաշան և Ռէտիֆ փաշան, որք 'ի Կ. Պօլիս կըգտնուին այժմ, դատաստանի ներքեւ դրուեցան:

Դարձեալ, Հայկէֆէնտին Շէխիսլամ կար-դեցաւ, և Սէրվէր փաշան արտաքին գործոց նախարար, փոխանակ Արիֆի փաշային:

ՊԱՇՏՏՈՒԱԿԱՆ ԱԶԻ

Որովհետեւ լրագիրք ոմանք՝ առանց ուշա-դրութիւն մատուցանելոյ արդեւումն եղելոյ տեղական լրագրութեանց, կըշարունակեն հրա-տարակել զշարժման զօրաց և սոստիկ տնի-ւորութիւն պատճառող համբաւներ, տպագրա-կան տեսչութիւն կըհրաւիրէ բարձրագոյն հրա-մանաւ և վասն վերջին անգամի, զբոլոր լրա-գիրքս օսմանեան կայսերութեան՝ յոյժ ճշգու-թեամբ զգուշանալ յետ այսորիկ 'ի խօսելոյ զշարժմանց զօրախմբաց և 'ի տալոյ կամ 'ի քա-ղեւոյ յայլ լրագրաց սուտ լուրեր թէ՛ յաջող 'ի-յեն և թէ՛ ոչ: Այլ լրագրոյ միոյ յոռի օրինակը չկրնալով ծագայել առ 'ի արդարացոյցանել զանձն, յանցաւոր օրեւ օրադիր իրաւունք պի-տի չունենայ, յառաջ բերել 'ի չատագործութիւն իւր, զօրինակն անաստութեան, զոր ուրիշ օ-րագիր մի կրնայ մատուցած լինել:

Իւրաքանչիւր տեղական լրագիր՝ որ այս վեր-ջին պատուիրանին համեմատ չվարուիր, անմի-ջապէս մշտապէս խափանման պիտի ենթարկուի:

ԱԶԳԱՅԻՆ

Զմիւռնա, 18 Յուլիս 1877

Ազգասէր խմբագիր ԱՐՇԱԼՈՒՍՈՅ,

Ազգային խնդրոց մասին ձեր սնկեղծ նախան-ձախնդրութիւնք քաջ ճաննալովս՝ ներկայ յօդ-ուածս ձեզ կը յուղարկեմ՝ որ բարեհաճիք զայն հրատարակելով՝ պարտաւորել զնուաստս:

Պ. ՆՇԱՆ ՄԻՐՁԱ

Ուսման յօդուածի առ ի ապացուցանել, այսու-քիկ են. Ա. թէ առ Խորենացեւ ոչ գոյնն այն-օրինակ բարբառք գաւառականք յորոց իցէ ծագեալ արդի աշխարհագրաւն, այլ թէ զանա-զանէր այն ի լեզու պարզ և ի պերճ. կամայով բառիւ՝ ի ռամկական և յուսումնական, Բ. թէ աշխարհիկ լեզու մեր նմանողութիւն է տաճկա-կանի, զոր և յուրի բոս մասնայ յառաջնում յօդուածիս: Զայստիկ և զայլ ինչ ինչ գիտողու-թիւնս իմ ջանայ քնդգիտաբանն հերքել եւթն-եակ յօդուածովք, յորս արտաքոյ ելեալ ի բուն խնդրոյս՝ ի զուր մասն զգրիչ իւր ի լեզուաբա-նական խնդիրս մտեալ քնդհանուր տեսութեամբ և զայլոց ոմանց զխօսս առ ի վկայութիւն թարգ-մանելով, որ ոչ յայլ ինչ օգտէ, բայց եթէ ձա-պաղել զխօսս իւր և տալատաղտուկ լինի երջողաց:

Զառաջին և զերկրորդ յօդուածսն ունիմար-դէն բնդ ակամբ. թողեալ նմա զշարայարու-թիւն մնացելոյ հնդից, յօդուածոց, փութացայց ես այլովք ձեռնարկութեամբք հաստատել զնա-խագատութիւն իմ առարկելով բանից Ա. ՄԱՄ-ԼՈՅ, որովք ջանայ ջրել զնոյն, այն է թէ մարդի աշխարհագրաւն ոչ է ծագեալ ի գաւառական բարբառոց, զորս Ա. ՄԱՄԼՈՒՆԻ համարի թէ զոյնն առ Ոսկէգարուն արտաքոյ գրաբառին մերոյ, ունելով զմիւսնոյն կազմութիւն և զնոյն կանոնս համաձայնութեան զոր ունի արդի աշ-խարհագրաւն. զոր ես ցուցի լինել նմանողու-թիւն և համաձայնութիւն տաճկականին: Զայսու-սիկ երկուս խնդիրս որ առնչակիցք են միմեանց՝ միանգամայն ջանացայց ցուցանել ջրելով զփաս-տքս բարեկամին իմից:

Պարոն Մամուրեան համարի թէ գրաբառն մեր ոչ է լեալ երբէք խօսուն լեզու Հայոց. ա-ւստիկ բանք նորա, եթէ չգուցէ ի նմա թերու-թիւն իմաստից, շէտիւնիք զորոց լեզուն բնաւ խօսած են՝ Նոյն 1876, յիւր 416: Եւ առ այս ա-պացոյց ի մէջ բերել զվկայութիւնս, իմա զազգ-դային երգան որք կան ի գիրս Խորենացեւոյն, և զորս ի մէջ բերել և ես յառաջին յօդուածի ի-մումս՝ սակայն ոչ ցուցանէ նա թէ զլիշեալ երդն ոչ գաւառաբարբառս համարի թէ զրական

ԱՌ ՊԱՐՈՆ ՄԻՆԱՅ ԶԵՐԱԶ

Բ

Մինչդեռ մեր առարկութիւնները սխալ ու մոլոր մեկնող, բանադատութեան օրինաց ան-տեղեակ, յանգն ու վանկը զանազանելու և իւր սկզբունքն իսկ պաշտպանելու անկարող խմբա-գրի մը հանգիպելունս վրայ ծիծաղելիս չէինք կրնար բռնել միւս կողմէ նաև չէինք կարծեր որ ձեզ ալ պիտի հանգչէինք, Պ. Զերազ, ձեզ որ կարդացածնիդ իսկ չհասկնալու գթադրու-թիւնն ունիք: Զեր նախորդ յօդուածին ամե-նակարեւոր կէտերը հերքելէնս վերջ կըկարծէք որ լուծութիւն պահած ենք և կարգ մը տղայա-կան բացագանչութիւններով կաշխատիք պար-զամիտներու աչքը խաբել առանց մտածելու որ ձեր այս երկրորդ յօդուածով ողջամիտ գրա-դէտներու ձեր վրայ ունեցած ամենափոքր հա-մարումն իսկ կորուսելու պատճառ եղաք: Մենք մեր նախորդ յօդուածէ պարբերութիւն մի մէջ բերելով պիտի հաստատենք որ միօրինակութի-ն և նորօրինակութիւն բառերու մասին հակասու-թեան մէջ ինկած չենք, թէ ձեր աշխարհագ-րաւ ժողովրդային չէ. հետեւաբար և մաքուր չկրնար ըլլալ, թէ ձեր լեզուն նորօրինակ է, թէ իւր նորօրինակ 'ի հարկէ նաև անխմանալի և ան-մերձենալի կընկատուի, թէ անդործածելի է քնդհանուրի կողմէ, թէ վերոյիշեալ կէտերէ կը-հետեւի նաև ձեր լեզուն չոր ու ցամաքութիւ-նը, այլնադակութիւնը և այլն և այլն:

Մեր նախորդ յօդուածին մէջ ձեր վերոյիշ-եալ առարկութեանց պատասխանները պարու-նակող պարբերութիւնը հետեւեալն է:

«Գուք ձեր գրութիւնը կողքաք կարծելով որ մեր վիճաբանութեան առարկայ ձեր ընտրողա-կան դրութիւնն է. ոչ մեր վէճի ենթարկեալ աշխարհագրաւ ժողովրդեան գործածած աշ-խարհագրաւն է և չէ թէ ձերը՝ որ կամայական դրութիւն մ'է, և այդ դրութիւնը չկրնար ազդել ժողովրդեան վրայ, վասնզի նորա խօսե-ցած տարրեր տարրեր ձեւերու և ոչ մին է. այլ ամենէ բազմադրութիւն մի՝ միօրինակութեան վերածուած, միւսնոյն միջոցին նաև անօրինակ-ութեամբ դատապարտուած: Ղ. Կանգի թէ և զայն քերականութեամբ կանոնի ենթարկած և միօրինակ ըրած էք, սակայն ժողովուրդը զայն

լեզու. ես այնու իսկ ցուցի, թէ ըստորում հա-սարակ ժողովուրդն երգէր զայն, և զի են յօ-րինեալ կազմեալ ի լեզու դրոց, ապա ուրեմն խօսուն լեզու ժողովրդեան էր գրաբառն կամ ոստանիկն և սրբազանն, որպէս հաճոյ թուի Պ. Մամուրեանի կողմէ, և հաստատագոյն վկայու-թիւնն առ այս ի մէջ բերի զնորին Խորենացեւոյ ասելն զպատմութեան իւրմէ թէ «հասարակաց խօսիւք անցի բնդ այն»։ Եւ զայստիկ կրկին վկայութիւնս ի նպաստ համարի դատին իւրոյ բնդգիտման իմ ձախողակի դատողութեամբ. և թերեւ զայս կամի ցուցանել թէ, ըստորում Խորենացի հասարակաց լեզու՝ ասէ՝ զօրութեամբ ի-մանի և զայլ բարբառս, ապա ուրեմն գոյնի և գաւառական բարբառք. ի հաստատութիւն ասելն իւրայտելով և իւրու յաղանակ տար-եալ ի մէջ բերէ Պ. Մամուրեան զբան պատմա-գրի մերում. յորում ասէ (գիրք Գ. 52.) «Հայկա-կանաց լեզուաց առնել նշանագիրս», յորնակի վարկելով ձայնիւ: Առ որ պատասխանեմ. եթէ զօրէ այդ բան յապացոյց առաջիկայ դատին, զօրեաց ապա և զոր այլուր ասէ եղականագէտ. «բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս» (Անդ-54): Ներեցէ ինձ ապա Պ. Մամուրեան ասել. եթէ հասարակաց լեզու է նոյն իսկ ժողովրդայինն կամ այլով բառիւ՝ գաւառայինն, և զի պատ-մութիւնն Խորենացեւոյ տեսանեմք արդ գրեալ ի լեզու գրոց տարրեր յոյժ յարգի աշխարհա-բառէ, եղբայրացուցանեմք թէ՛ գաւառական բարբառքն էին յայնժամ ի նոյն լեզու գրոց: Զայս անհերքելի ճշմարտութիւն լուծեալն ըն-դունի և նա ինքն Պ. Մամուրեան, զի և ոչ միով առարկութեամբ համարձակի պատասխանելին:

Արդ յասացելոցս յայտնի երեւի, թէ Խորե-նացի գրեաց այնու լեզուաւ զոր իմանայր Սա-հակ Բաղդատունի խնդրող պատմութեան, որ խօսէր անշուշտ զհասարակաց բարբառն և ոչ եթէ զայլ լեզու ոստանիկ կոչեցեալ, որ էր հա-զիւ հայերի հասարակ ժողովրդոց ըստ կարծեաց Ա. ՄԱՄԼՈՅ. թէ և սոյն սա զնոյն պատմութիւն համարի գրեալ ոստանիկ լեզուաւ:

Այլ աստանօր փոքր մի զարտադեալ ի կար-

նորօրինակ և անմերձենալի կընկատէ քանի որ իր խօսեցածը չէ և ըլլալիք չունի: Այդ գրու-թիւնը աշխարհագրաւն ինքնաբերաբար գէշի կատարելութիւն դիմելու արդեւք ըլլալէ զատ ուրիշ օգուտ մի չունի: Լեզուն ինքնին պիտի ծագի, աճի և կանոնաւորի և ասիկա ժամա-նակը միայն պիտի ընէ, չէ թէ մասնաւորաց ջանքը, մասնաւոր երբ նոյն ջանքը ժողովրդ-դեան խաւերու մէջ գործածուած լեզուի ոճե-րու և ձեւերու երբէք չհամապատասխաներ:

Արդ վերոյիշեալ պարբերութեան մէջ պա-րունակուած ձեր հարցերու պատասխանները զանազանելու կամ հասկնալու երբ անկարող կըգտնենք զձեզ՝ անտարակոյս իրաւունք ու-նիմք՝ զձեզ իսկ իմաստակ մի ճաննալու:

Կըսէք թէ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ երոտանիին վրայ բարձրացած լեզուագիտական պատգամներ կու-տանք չորս հովերու: Այո, Պ. Զերազ, ճիշդ է. ԱՐՇԱԼՈՒՍՈՅ երոտանիին վրայ ելած լեզուագի-տական պատգամներ կուտանք չորս հովերու, որոցմէ մին դուք էք, երկրորդը՝ Ա. ՄԱՄԼՈՅ խմբագիր Պ. Մ. Մամուրեան, երրորդը՝ միակա-նի Պ. Շահնուր(1) և չորրորդը՝ Լոնտոնի արեւ պարոն Յ. Ա. Բ.: Իսկ դուք՝ որ Ա. ՄԱՄԼՈՅ չոր-քոտանիին վրայ ելած ամենու ծիծաղը կըշար-ժէք ձեր ձանձրացուցիչ քարոզներով, և գրա-կան հրապարակի վրայ ասոր ու անոր դուռը կըզարնէք հացկատակի և չորսբորթի ամէն յատկութիւններով փառք մուրալու համար. ձեզ ինչ անուն տամք Պ. Զերազ. . . .

Կըսէք թէ անպաշտպանելի գրաբառն գէժ 120է՛ վատու կուտած էք: Գրաբառը մեր պաշտ-պանութեան պէտք չունի. իսկ աշխարհագրաւ ըսելով չեմ իմանար ձեր գրութիւնը, այլ ժո-ղովրդեան գործածածը, և ժողովրդեան գոր-ծածած աշխարհագրաւն մաքուրութեան և կա-տարելութեան համար անհրաժեշտ է գրաբառն ուսումը և մշակութիւնը: Այսպէս կըհաստատէ Հ. Արսէն, այսպէս կըգաւառի նաև ամէն ող-ջամիտ գրագէտք: Փորձառու անձերու համոզ-

(1)Երկրորդ յօդուածով մը Ա. ՄԱՄԼՈՅ քրդակից Պ. Շահնուրի քանի մը խօսք ունիւր ուղղելի, ուր պիտի բացատրենք նաեւ միակամի բառից իմաստը: (Ծ. Յօդուածագրից:)

գէ բանիս ինքին առցուք եթէ զի՛նչ կամիցի նշանակել Պ. Մամուրեան հասարակ կամ սրբա-լեզու ասելով, զորոյ անդիտանումը գիտման ուստի առեալ զանուանակալութիւնս: Զի ու-պէս կամի հաստատել ինքն, գրաբառ լեզուն մեր և հին էր ի գործածութեան և եթ յար-քունիս թագաւորաց իւր գիւտանակուն լեզու որպէս առ նապոլեոնիս գիւտանակուն լեզու բազմաց արքունաց եւրոպոյից էր Գաղղիական: Արդ թէ քանի ծիծաղելի է և անբնդ ունելի սոյն նախագատութիւն նորա՝ յորմէ ջանայ հետեա-ցուցանել խօսուն լեզուն հասարակաց լինելալը, յայտնի է ամենեցուն և չունի պէտս հերքման: Այլ ներեցէ ինձ առնել զայս հարցումն. եթէ գրաբառն էր լեզու ոստանիկ, յատկացեալ ար-քունականաց, ալեւ-ալեւայ Բաբելոնաց և ուրեմն Դա-ւաւն միայն, և եթէ էր սեփական լեզու Արարատ նահանգին և եթ որպէս պնդէ Պ. Մամուրեան, քանի մեծ անիրաւութիւն էր սրբոց Թարգման-չաց մերոց, ոստանիկ լեզուաւ թարգմանելան-խօսի զամենայն մատանս սուրբս. այլ և զպատ-մական, զիմաստասիրական և զգաւական ի նոյն լեզու յօրինել, թողցուք զայս. ոչ ապուրէն մեծագոյն ևս անիրաւութիւն էր զսուրբ Գլիւ և յաւէտ զԱւետարանն Գրիստոսի, յորում պա-րունակին ամենայն պատուիրանք և օրէնք եթէ կրօնականք և եթէ առաւել ևս բարոյականք, յօրինեալ գրեալ ի պէտս յետնագունին իսկ գաւառ քրիստոնէից, թարգմանել զայն ի լեզու զոր ոչ ճանաչէ ժողովուրդն, և կացցէ մնացէ այն վասն նորա իրոք տառք մեռեալ, Եւ միթէ իրաւունք իցեն թարգմանաց այնպիսի բնդ քրիստ մտանել, երկրագոյն ջան ի մէջ առնուլ յօգուտ և ի շահ հոգւոյ վեհագունից և ու-սումնական խմբի և զուսմիկ ժողովրդոց փըլ-կութեան անտես առնել, թողուլ զնոսս ի խո-ւարի և ի ստուերս բարոյական մտաւ: Եւ այն իսկ անիրաւութիւն է յաւա ճշմարտասիրաց խո-սիլ և գրել լեզուաւ սեփական եղելոյ նախա-գին Արարատեան և ի նոյն բարբառ քարոզել զգիրս սուրբս բնակչայն բարձր Հայոց, Արշա-նայց, Մոկաց, Պարսկահայոց, Տուրքերեանց,

ման և արեւոյ պէս յայտնի ճշմարտութեան մի
գիտման հետեւ զիմադրութիւնը Զոյիլոսի գործ մի
կրկնէ մեր աշխարհը :
Մենք ձեր գրութիւնը կընկատենք Սենտա-
յայ գաղտնի մէջ կանգնուած իբր աշտարակ մի
արարականի վաղափութեւ Ե. Պ. Չերազ, և լեզու-
նի խառնակ :
Կրթէք թէ գէթ ձեր ընտրողական աշխարհա-
տունը գրադատելինք . ահա դարձեալ մուրաց-
անութիւն . ինչպէս քննադատելինք այնպիսի
մի որու երբէք կարեւորութիւն տուած
էինք . և անկարեւոր համարած բաներնիս երբ
այդատելինք մի թէ ժամանակնիս պարագայ տեղ
տեսած պիտի չըլլայինք :
Կրթէք թէ Տօրայի յառաջադրանքին մէջ անա-
պրծութիւն ըրած ենք . ո՛չ, Պ. Չերազ, կըսեալ
ք, տաւ և ութ տարեկան հասակի մէջ նոյն
պէք գրեւէս վերջ կասկածելով որ թերեւս
անգիտարար անպատեհութիւն մի կամ սխալ-
մի կրնայինք գործած ըլլալ նոյն յառա-
յայանքին վերջի պարբերութիւնը հեռեւեալ
կայիւ գրած էինք . «Շնորհապարտ պիտի հա-
տարինք զմեզ եթէ ընթերցողը ներողամտութեւ
կատեն մեր թերութիւնները» : Ինչո՞ւ այս պար-
բերութիւնը նկատողութեան չէք առնուր . մի-
թէ այս կերպով վերստին Զոյիլոսի պաշտօն չէք
կրթէք :
Կրթէք թէ «յարարեցեալսն դերանունն իսկ
եւ չէք կրցած ունիլ» և իբր ապացոյց յա-
տարինք կրթեցէք մեր նախորդ յօդուածի սա պար-
բերութիւնը, «Ա. ՄԱՄՈՒՆԻՆ» մերթեց Պ. Պալա-
տանանի գրութիւնը, այն գրութիւնը որ մեր
նախնայնալ խնդրոյն նկատմամբ գրուած էր,
որ իր գաղափարաց հակառակ և մեզ նպաս-
տաւոր ըլլալուն «հրատարակեց» : Կէտադրու-
եանց ուղարկութիւն ըրէք և աշերնիդ ակնոց
դրէք . եթէ դարձեալ չկարենաք լուսաբա-
լ թերեւէ կանթեղ մի կախեցէք, եթէ
այսին չկարենաք բոս օրինի վերլուծել զայն
ատեն մեզ իմացուցէք և մենք մեկնու-
նք կուտանք : Կըստիւմքինք որ հայերէնի
լեզուի յառաջանաք, որպէսզի կարող ըլլաք
աղբ և ուղիղ իրարմէ զանազանել, երկրորդ-
ալ մ'ալ յառաջ կրթեցէք մեր յօդուածէ

հետեւալ պարբերութեամբ . . . «Շահնուր և
Ծերենց ստորագրութեամբ նամակներն, որոնց
մէջ դժուարին է գտնել նամակ մի որ առ վրոյր
գովեստ մի, ուղերձ մի չգտնուի» : Հոս աւելորդ
է յայտնել որ տպագրական սխալմամբ «-» ը-
լալու տեղ «-» գրուած է : Մենք ոչ այնքան ձեր
վրայ կըդրմանանք Պ. Չերազ, վասնզի դուք ար-
դէն ցոյց տուիք որ իսկապէս Զոյիլոս մ'էք, այլ
կըցաւինք Ա. ՄԱՄՈՒՆԻՆ խմբագրին վիճակին վրայ
որ այսօրինակ տղայական գրութիւնները հրա-
տարակելու չափ նուաստացած է : Բայց դարձ-
եալ չենք դարմանար . վասնզի մենք արդէն
գիտէինք որ Ա. ՄԱՄՈՒՆԻՆ չէ թէ Պ. Չերազի՛ն
նոյն իսկ անուս և անդրադէտ բեռնակրի պիտի
յանձնէր այս դատը իր օձիքը աղատելու համար
այս խնդրէն որ քիչ մնաց պիտի ճաթեցնէր
զինքն բոս իւր բերանացի խոստովանութեան :
Մեր անձնականին դէմ քանի մը տող խիստ
դժեհիկ կերպով յարձակած էք, Պ. Չերազ,
մենք չէինք կարծեր որ դրական հրապարակի
վրայ ստորին կարգի անձերու յատուկ յատկու-
թիւններովալ երեւելու քաջութիւնը կունենաք :
Մենք ձեր թշնամանքներու դէմ թշնամանքով
չենք պատասխաներ : Զմեզ Զոյիլոս կըկոչէք,
այս անուանակոչումն ալ մեզ համար նկատողու-
թեան անգամ անարժան կըհամարուի, վասնզի
արդէն խաղաղութեւ զձեզ Տօն Գիշոր անուանած
է . վերա- Հ. Ալիշանեան ձեր ընթացքը անբա-
նական կըկոչէ . Հնդկաբնակ գրագէտ Պ. Ա. Պ.
Աղանուր զձեզ և ձեր նմանները խեղճորոյս
և անխիղճ կըճանաչէ : Մենք ձեզ և Պ. Մա-
մուրեանի նման անձերէ գովեստ չենք սպասեր,
այլ գերա- Ալիշանեան սրբազանի պէս անձերէ,
որ զմեզ կըխրախուսէ և կըգովէ, ինչպէս դուք
իսկ տեսաք ԱՐՇԱԼՈՒՍՈՅ 1070 թուոյն մէջ :
Մենք կըցաւինք որ դրական հրապարակի վրայ
դրագիտաց դիրտերու հետ բանադատել վիճա-
կեցաւ մեզ, Գուր և Պ. Մամուրեան կրնանիք
կարգ մը մոլեռանգներու սր երբ վէճի մը մէջ
յաղթուն կամբաստանեն իրենց հակառակորդը
ըսելով որ հաւատքնին հայհոյած է :
Կրթէք թէ անբողիկ Պ. Պօլիս պիգաց' զՊ. Մա-
մուրեան ամեն իմաստակներէ իմաստակագոյն
կոչելուս : Մեր գրութեանց Պօլսոյ մէջ ինչ

աղբեցութիւն գտած ըլլալը ձեզմէ իմանալու
պէտք չունինք . վասնզի մենք ձեզմէ աւելի ա-
ղբի գիտենք : Գուր չէք գիտեր թէ Զմիւռնիոյ
սղլամիտ անձինք որ մեր վէճի ամեն հանգա-
մանքներու նոյնպէս և Պ. Մամուրեանի իբր
խմբագիր և տեսուչ աղբային վարժարանաց՝ ը-
րած ամեն շահատակութեանց տեղեակ և ծա-
նօթ են, գօհութեամբ նկատեցին մեր դրած-
ները : Ասկէ դատ Ա. ՄԱՄՈՒՆԻՆ նախ յարձակած
էր մեզ դէմ, զմեզ առանց օրեւէ ապացոյցի ի-
մաստակ կոչելով, մինչդեռ մենք ասոր ի վո-
խան վաստով և ապացոյցով հաստատած ենք
իւր ամեն իմաստակներէ իմաստակագոյն ըլլալը :
Կըզրէք թէ Պ. Մամուրեան Զմիւռնիոյ դրա-
կան արեւն է և Հայ հորիզոնի պայծառագոյն
աստղերէ մին . այսօրինակ պատուոյ արտօն մի
անոր տալերնէդ յառաջ՝ կըսպասէինք որ նոյն
ախողութեւ արդարացնող մի քանի ապացոյցներ
մէջ բերէիք . բայց մենք ասոր ներհակը հաս-
տատելու համար չատ և չատ ապացոյցներ ու-
նինք զորս ժամանակին պիտի յայտնենք : Գովե-
ցէք և շողքորթեցէք, Պ. Չերազ, այն ակնկա-
լութեամբ որ Գարիէլեան վողի հնչած ժամա-
նակ Պ. Մամուրեան ալ ձեր դրական վորձերը
գովէ, ինչպէս որ խոստացած է : Մենք կըցա-
ւինք Ա. ՄԱՄՈՒՆԻՆ խմբագրին ապերախտութեան
վրայ որ ինչո՞ւ նաեւ զձեզ Պօլսոյ դրական լուսի-
նը չ'անուանէր . բայց մի զարմանաք Պ. Չերազ,
թերեւս Ա. ՄԱՄՈՒՆԻՆ խմբագիրը ինք արեւ եղած
ժամանակ չուղեր որ լուսին մ'ալ գտնուի գի-
շերներն իսկ իւր ներկայութեան վաւերաբողներ
ունենալու համար Գուր կարմիր աշխարհաբառ-
եան, Պ. Չերազ, շողքորթութիւններդ ալ կար-
միր շողքորթութիւնն, այսինքն չափազանցու-
թեանց չափազանցութիւն : Գօհ ենք որ նա-
խորդ յօդուածնաւ մէջ տուած խրատնիս լաւ
կատարած էք, այսինքն գովել զՊ. Մամուրեան
որ այս անգամ Սկանարելէ աւելի ստորին եղաւ .
վասնզի Սկանարել բռնի ընդունեց իր բիշկ
ըլլալը, մինչդեռ Պ. Մամուրեան յօժարակամ
ընդունեց ինչ որ պիտի ըլլայ թերեւս իւր միւս
անգամ ծնած ժամանակ :

Պ. ՆՇԱՆ ՄԻՔԶԱ

տեսաց Սիւնեաց և այլոց եօթանց նահանգաց
թմանից գաւառաց, որք ի բայ առեալ զվեշ-
տաւան գաւառս Արարատայ, խօսէին ըստ Պ.
Մամուրեանի յաւիտեան բարբառս զանազանս,
որոց միահամուռ ծագեալ է արդի աշխարհա-
տուն . Գարձեալ, եթէ ոտանիկ, այն է դիւա-
կան լեզու էր գրաբառն, ընդէր և առ Ռու-
նեան հարստութեամբ ոչ պահեցաւ այն եր-
կազմութեամբ, մանաւանդ զի և սրբազան
այն և ունէր իւր պաշտպանս որպէս երկրորդ
արդմանիչքն մեր առ կիրիկեցի իշխանօք, որք
զոր տարան ազգախորհարար նորոգել զլեզու
զգրական անկեայն յառաջին շքեղութեան
մուտ գտեալ էր յաղթին մինչև յարքունիս
իշխանաց աշխարհիկ լեզուն աղաւաղեալն
աղբեցութեան արշաւանաց արաբացեաց թըր-
աց և սարակինոսաց, որոց տեղի տայր անդգու-
տար և հակումն աղբիս առ ամենայն բարս և
զորութիւնս օտար աղբաց :
Պ. Մամուրեան թերեւս համարի եթէ իսպառ-
ախիցեմ զտարբերութիւնս և զբաժանումն
այն ընդհանուր լեզուի յազգս աղբս ասից ա-
ռեալ կամ գոյն մերձաւորս միմեանց : Յա-
ւանում՝ յօդուածի իմամ յայտնի ցուցի եթէ
դու ունիդարու բաժանէր ի պարզն և ի պերճ-
ունս պարզ՝ այն է հատարակացն, բաժանէր
արձեալ ի գաւառական բարբառս, ոչ ըստ
զմութեան և ըստ հիմնական տարբերութեան
արականական ոճոյ, այլ յաւելտ ըստ բառից
ի հոլովմանս նոցա և յաճանցական մասնիկս
ըստ առողանութեան . և այս տարբերու-
թիւն անհրաժեշտ հետեանք են իւրաքանչիւր
առաւաց և առաւել այնոցիկ որք սահմանա-
ցք գտանին այլոց աղբաց, ընդունելով
աղբականար գրառս և զառողանութիւն և
զանական արտասանութեան այնոցիկ աղբաց
թմանով առաւելեալ գտանէին քան զայս .
այսինքն և աղբեցութիւն նոցա որպէս և բարոց
զորքէր ի բարբառս և ի բարս սակաւութիւ
զորքէր : Զայս մինչև ցայսօր է տեսանել
աղբայինս մեր բնակեալս ի Պարստան, ի
Երաստան, ի Վիրս, ի Լեհաստան, յԱրա-

բիւ և ի սահմանածայրս փոքուն Ասիոյ, որք թէ-
պէտեւ խօսին զլեզու մայրենի, այլ ընկալեալ են
զնոցին աղբաց զառողանութիւն և զբառս յո-
ւովն որք կըցածն զսերիական բարբառս իւրա-
քանչիւր աշխարհաց յորս բնակին : Այս և աւա-
սիկ գաւառական բարբառն զոր իմանամք :
Սոյն տարբերութիւն լեզուի առ թարգմանօք
չէր ինչ այնչափ զգալի և որպէս ասացի, տար-
բերութիւնն կայանայր ի բառս և ի հոլովմանս
բառից . այսպէս, ի գաւառս ուրեք ասել բան
և այլուր խօս և ուրեք ևս զոյց զգալի և
զայս յաճախ ի գործածն խորենացի թերեւս էր
յատուկ զաւառի իւրոյ առաւելեալեց վեշ կամ
պատմութիւն նշանակութեամբ, ջոյն տարբե-
րութիւն գտանեմք և զարդիս իսկ ի գաւա-
ռային բարբառս . թէ և ամենեցուն լեզու իյէ
ռամկականն . զի զոր Զմիւռնացին ասէ «գուրը
դոյնը», Պօլսեցին ասէ «գուրը վակը», Զմիւռ-
նացին ասէ, «գուրը երկաթը դիր» Դերման-
ցին ևայլք ասեն՝ գուրը աղիս : Եւսնք ասեն
«գուրը կըպըլ» այլք՝ «բանիքը» : Նորնախն-
անցիք զանձրեն անուանեն լաւաւ . Զմիւռնացիք
ասեն խօսի, Պօլսեցիք խորաբէլ, իսկ Նորնախն-
անցիք, Ամասիացիք, Սոլոսիք ևայլք ասեն
լաւալ կամ լաւալ անէ : Զմիւռնացիք և բնա-
կիչք Հանկիթ գաւառի ասեն իւրեք, Պօլսեցիք
լաւալ . իսկ երեսուցեմացիք և ի գաւառս ու-
րեք Հայաստանի, ի ջնդուս ասեն իւրեք կամ իւրեք
որ է աղաւաղեալն իւրեք բային : Ըստ այսմ օ-
րինակի անթիւք գտանին տարբերութիւնը բա-
ռից որպէս յաշխարհաբառն մեր՝ նոյնպէս և ի
գրաբառն, որով հաստատի թէ զանազանու-
թիւն գաւառական բարբառոց կայանայ ի բառս
և յարտասանութիւնս նոյնի և յառողանութեան
որպէս Պարսկահայք, յորոց գաղթեալ են ժո-
ղովուրդք խօսեմիչի մերձ ի Զմիւռնիոյ, որոց է
և առանձին բարբառ անիմանալի մեզ, ըստ օ-
րինակի Պարսիկ երկարեն զճնշումն ձայնաւորաց
վերջին բառից :
Այս ամենայն տարբերութիւնք, որպէս ան-
ունի, ոչ է ի կաղմութեան և ի գաւառորու-
թեան բառից, այլ բառից և եթէ, յորմէ մա-

կաբերի թէ և լեզու ոսկեղարուն էր դրոց լե-
զուն ըստ կաղմութեանն, որպէս յայտ է ի
պատմութեանն խորենացոյն և յաղբային եր-
կոյ զնոյն լեզու վարէր և ժողովուրդն և իւրա-
քանչիւր գաւառական բառական տարբերու-
թեամբ, զոր հաստատէ և ինքն Պ. Մամուրեան
փոքր ինչ ճապարհելով դրանն, և ընդունի
ընդիս գրառական տարբերութիւնն յասեւն .
«Լեզու մը(1), մանաւանդ բարբառ մը կրնայ իր
բնիկ բառերը ողբել (սեղմել)՝ ամբիփիլ (ամբի-
փել), բոլորովին թողուլ կամ տարբեր ձայնով և
նշանակութեամբ գործածել . կրնայ զայն խօսող
ժողովուրդը նորեւ հնարել և օտար բառեր ըն-
դունիլ և իւրացնել» : Թէ և այսու սկզբամբ ոչ
եթէ հիմնական փոփոխութիւն կրէ լեզու, այլ
բարբառաճի, ճոխանայ և ի կատարելութիւն
հասանէ և դիւրացուցանէ ևս ի յայտնել դա-
մենայն աղբս նիւթական բարոյական և իմացա-
կան գաղափարաց :
Կամեալ իմ ճոխագոյնս խօսել զնիւթոյս առ
ի հաստատել թէ առ խորենացեալ խօսէին ի
լեզու դրոց, առանց ժխտելոյ և գրառական
տարբերութիւնս գաւառայնոց, ի մէջ բերեմ
աստէն ի մնացորդաց անալի բանից ինչ և ասից
ի դրոց բարբառ, որք ցայժմ ի գործածին
դրեթէ յամենայն գաւառս և անխտիր յամե-
նայն աղբայինս թէ և իյնն ի ծայրս անձանթ
աշխարհաց : Ահաւասիկ . օրն ի օրն, ցոյնն ի ցոյն,
գիշերն ի ցոյն, ի հոգն յաշխարհայն կամ առանց
նախորդի՝ հոգն յաշխարհայն, ի խօսել ուրուք
գտեալութեան իրիք :

(1) Պ. Մամուրեան լաւագոյն եւս յօրինել գաղափար-
նաբան իւր երկ յանձն առնոյր ըստ օրինակի այլոց
ասեւն մի քան երկ մը, որ եւանջալ ձայն տու մեզ . և
զանց անուոյ կրճատել զայն անխտիր առաջի ամե-
նայն ձայնաւորաց, առ ի զանազանի ի մի արգելա-
կան մակբայէ, զոր մարք է սղել ապաքարցիս՝ ճեղե-
նելով ու մակբային գաղղիացոց . որով ազատ լինիք
եւ յօտարաձայն նշանակութիւն բառիցն որ ոչ հա-
մեատարեամբ ճեղք յունկն մարդոյ : Զայս ասեմ սի-
րողաբար եւ ոչ վնասար :

